

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՏԵՄԱԿԱՆ  
ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Վճռաբեկ դատարանի լիազորությունների հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրների ուսումնասիրությունը պահանջում է նախ և առաջ անդրադառնալ վճռաբեկության՝ որպես դատական ակտերի վերանայման ձևի իրավական էությանը:

Վճռաբեկությունը՝ որպես դատական ակտերի վերանայման ձև առաջացել է 17-րդ դարի վերջերին և 18-րդ դարի սկզբին Ֆրանսիայում, այսպես կոչված, «մաքուր» վճռաբեկության ձևով (վճռաբեկության դասական մոդելը), որը ենթադրում է դատական ակտի վերանայում՝ սուկ օրենքով սահմանված ձևական պահանջների, այն է՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի պահպանման տեսանկյունից: Դատական ակտերի վճռաբեկ վերանայումը դասական իմաստով չի ենթադրում գործի ըստ էության քննություն, այսինքն՝ գործով ձեռքբերված ապացույցների անմիջական հետազոտման արդյունքում գործի փաստական հանգամանքների վերլուծություն և գործի փաստական կողմի վերանայում: Բացի այդ, տեսական գրականության մեջ իբրև մաքուր կամ ձևական (ֆորմալ) վճռաբեկության բնութագրիչ գիծ առանձնացվում է դատական ակտը փոփոխելու լիազորության բացակայությունը և միայն դատական ակտը բեկանելու և գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու կամ դատական ակտն անփոփոխ թողնելու հնարավորության առկայությունը: Հենց «վճռաբեկություն» եզրույթը ծագում է լատիներեն «cassatio» կամ ֆրանսերեն «casser» բառերից, որը թարգմանաբար նշանակում է կտրել, ջարդել, ոչնչացնել, այսինքն՝ բեկանել կամ չեղյալ հայտարարել ստորադաս դատարանի դատական ակտը<sup>2</sup>:

<sup>1</sup> ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ. Ս. Ղազինյան:

<sup>2</sup> Ավելի մանրամասն տե՛ս՝ **Ղազինյան Գ. Ս.**, Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Եր., Երևանի համալս. հրատ., 2001, էջ 380, **Калмыков В. В.** Кассационное производство в уголовном процессе: Проблемы теории и правоприменения. дисс.... канд. юрид. наук. Казань, 2010, էջ 11-40, **Сухова О. А.**, Кассационное обжалование судебных решений в Российском уголовном процессе. Дисс. ...канд. юрид. наук. Саранск. 2004. էջ 18-61:

«Մաքուր» վճռաբեկության ֆրանսիական մոդելը<sup>3</sup> մի շարք այլ երկրների դատական վերանայման համակարգում գոյություն ունեցող այս ինստիտուտի նախատիպն է: Մակայն այսօր որևէ երկրի դատական համակարգում դժվար է գտնել մաքուր ձևով պահպանված վճռաբեկության դասական մոդելը: Նահանջը մաքուր վճռաբեկությունից և խառը վճռաբեկության մոդելի ձևավորումը դրևստրվում է վճռաբեկ ատյանի գործունեության մեջ վերաքննության որոշակի տարրեր ներմուծելով: Վճռաբեկության խառը ձևի պայմաններում հնարավոր է դառնում վճռաբեկ ատյանի կողմից գործի էության մեջ որոշակիորեն խորանալը և ըստ այդմ նաև բողոքարկվող դատական ակտը փոփոխելը (նոր դատական ակտ կայացնելը)<sup>4</sup>:

Նահանջը մաքուր վճռաբեկությունից ունի իր օբյեկտիվ պատճառները: Իբրև այդպիսին շատ հաճախ նշվում են, օրինակ, մարդկային և նյութական ռեսուրսների դատավարական խնայողության խնդիրը<sup>5</sup>, իրավունքի և փաստի հարցերի հստակ տարանջատման անհնարինությունը, քանի որ գործի փաստական կողմին վերաբերող հարցերը ճնշող մեծամասնությամբ կարելի է վերաձևակերպել և ներկայացնել որպես իրավական խնդիր<sup>6</sup>:

Մաքուր վճռաբեկությունը, կարծում ենք, ավելի շատ և ավելի շուտ տեսական մոդել է, և գործնականում դրան բնորոշ բոլոր տարրերի հետևողական և անշեղ իրացումը դժվար է պատկերացնել: Դա որոշ դեպքերում կարող է նաև հանգեցնել ձևի անհարկի գերակայությանը բովանդակության նկատմամբ: Ուստի չափազանց կարևոր է վճռաբեկության այս կամ այն մոդելի ընտրությունը և դրա շրջանակներում կոնկրետ դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանի (այսուհետ՝

---

<sup>3</sup> Տեսական գրականության մեջ մայրցամաքային կամ ռոմանագերմանական իրավական համակարգում վճռաբեկության ինստիտուտի շրջանակներում առանձնացնում են երկու հիմնական մոդել՝ ֆրանսիական վճռաբեկությունը (մաքուր վճռաբեկության մոդել) և գերմանական ռևիզիան (խառը վճռաբեկության մոդել): Տե՛ս **Sofie M.F. Geeroms**, Comparative law and legal translation. Why the terms Cassation, Revision and Appeal should not be translated. The American journal of Comparative Law, Vol. 50, No. 1, (Winter, 2002), էջ 203:

<sup>4</sup> Տե՛ս **Лавтух Н. В.**, Формы проверки не вступивших в законную силу приговоров. Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург. 2001, էջ 26-27:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>6</sup> Տե՛ս **Jolowicz J.A.**, Appeal, Cassation, Amparo and all that: What and why?, էջ 2050-2051: <http://biblio.juridicas.unam.mx/libros/2/643/26.pdf>:

Վճռաբեկ դատարան) լիազորությունների օրենսդրական կանոնակարգումն իրականացնել այն հաշվով, որ նախ՝ գործնականում դրանց կենսագործումը նպաստի Վճռաբեկ դատարանի կողմից արդարադատության իրականացման (դատական սխալների ուղղման) և օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիրներին հնարավորինս արդյունավետ իրականացմանը, և երկրորդ՝ չանտեսվի դատական ակտերի վերաքննիչ և վճռաբեկ վերանայման կառուցակարգերի այն էական տարբերիչ առանձնահատկությունը, որ եթե վերաքննությունը ենթադրում է գործի և՛ փաստական, և՛ իրավական կողմը վերանայելու հնարավորություն, ապա վճռաբեկության մեխանիզմը սահմանափակված է միայն գործի իրավական կողմով<sup>7</sup>: Այլ կերպ՝ վճռաբեկ դատարանի լիազորությունները կանոնակարգելիս իբրև ուղենիշ պետք է ընդունել այն, որ վճռաբեկ դատարանը կարող է ստուգել միայն ստորադաս դատարանի կողմից դատական ակտ կայացնելիս նյութական և դատավարական օրենքի պահանջների պահպանումը: Միաժամանակ, վճռաբեկ դատարանը պետք է հնարավորություն ունենա խորանալու գործի էության մեջ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ստորադաս դատարանի կողմից թույլ տված իրավական սխալներն ուղղելու համար, և չի ենթադրում գործի փաստական կողմի վերանայում: Եվ հենց այս դիրքորոշման լույսի ներքո ենք անհրաժեշտ համարում ուսումնասիրել Վճռաբեկ դատարանի լիազորությունների օրենսդրական կանոնակարգման հետ կապված խնդիրները:

---

<sup>7</sup> Կարծում ենք վճռաբեկության մեխանիզմում վերաքննության տարրերի անհարկի ընդլայնման դրսևորում է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ին ընդունված թիվ 20-48-Ն օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում դատական սխալի իմաստով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի նույնացումը վերաքննիչ վերանայման արդյունքում դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերի հետ: Խոսքը հատկապես վերաբերում է այն հիմքերին, ինչպիսիք են՝ գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված՝ դատարանի հետևությունների անհամապատասխանությունը դատարանում հետազոտված ապացույցներին և դատավճռով նշանակված պատժի անհամապատասխանությունը կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին, որոնք գուտ փաստի հարցեր են և ենթադրում են գործի փաստական կողմին անդրադառնալու անհրաժեշտություն: Դրանց հետ կապված՝ վճռաբեկ վերանայման շրջանակներում կարող են քննարկվան առարկա դառնալ միայն, համապատասխանաբար ապացույցների գնահատման քրեադատավարական պահանջների խախտումները կամ նյութական օրենքի սխալ կիրառումը:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) լիազորությունները սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) 419-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը՝

1) մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և այդ մասով հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը:

4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է համապատասխան ստորադաս դատարանի ակտը, եթե համապատասխան ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

6) վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում վճռաբեկ դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

Այս դեպքում վճարել դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

Գրեթե նմանատիպ կարգավորում է սահմանված նաև Նախագծում (Նախագծի 393-րդ հոդվածի 1-ին մաս):

Օրենսդիրն այսպիսով սահմանել է Վճարել դատարանի լիազորությունների ընդհանուր շրջանակը, սակայն հստակեցված չեն վճարել վերանայման արդյունքում դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերն ու դրանց առկայության պարագայում Վճարել դատարանի կոնկրետ լիազորությունները (լիազորությունների շրջանակը):

Քննարկվող խնդրի առնչությամբ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը հստակ օրենսդրական կարգավորում է նախատեսում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի համար (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան): Ընդ որում, վերաքննիչ վերանայման արդյունքում դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերից երկուսը՝ քրեական օրենքի կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը (ՔԴՕ 397-րդ հոդված) և քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՔԴՕ 398-րդ հոդված), նույնանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ դատական սխալի հիմքով վճարել բողոք բերելու դեպքերի հետ, քանի որ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճարել դատարանը դատավարության մասնակիցների նյութական կամ դատավարական իրավունքի խախտման հարցի լուծման ընթացքում ղեկավարվում է նույն օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածների կանոններով: Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ դատական ակտի բեկանման կամ փոփոխման այս հիմքերի առկայության հարցը լուծելիս Վճարել դատարանը կարող է առաջնորդվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածներով սահմանված դրույթներով, իհարկե այն վերապահումով, որ նշված հոդվածներում ամրագրված դրույթները սահմանում են նաև կոնկրետ հիմքերի առկայության դեպքում Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը բեկանելու կամ փոփոխելու կոնկրետ լիազորությունը (կայացվելիք կոնկրետ որոշման

տեսակը), որոնք, սակայն, չեն կարող նույնական լինել Վճռաբեկ դատարանի համար՝ հաշվի առնելով վերաքննության և վճռաբեկության իրավական կառուցակարգերի առանձնահատկությունները և դատական սխալներն ուղղելու դատավարական հնարավորությունների ծավալային տարբերությունը: Ուստի, կարելի է եզրակացնել, որ բոլոր դեպքերում առկա է օրենսդրական բաց վճռաբեկ վերանայման արդյունքում դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերի և դրանց առկայության դեպքում վճռաբեկ դատարանի լիազորությունների հնարավորինս հստակ կանոնակարգման առումով: Օրենսդրական հստակ կարգավորման անհրաժեշտության և կարևորության մասին են վկայում դատական ակտի բեկանման կամ փոփոխման առանձին հիմքերի առկայության պարագայում վճռաբեկ դատարանի լիազորությունների հետ կապված՝ տեսական գրականության մեջ առանձնացվող խնդիրները և դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ առկա ոչ միանշանակ մոտեցումները, որոնք կներկայացվեն ստորև ՀՀ վճռաբեկ դատարանի առանձին լիազորությունները քննարկելիս: Հարկ է նաև նշել, որ օրենսդրական այս բացը լրացվել է Նախագծում: Եվ չնայած Նախագծում տրված կարգավորումներն առավելապես լուծում են քննարկվող խնդրի՝ գործող օրենսդրական կարգավորման թերությունները, այդուհանդերձ, առանձին դեպքերում ևս դրանք որոշակիորեն խնդրահարույց են:

Այսպես, ՔԴՕ 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի քննության և դատական ակտի վերանայման արդյունքում իրավասու է մերժել բողոքը, իսկ բողոքարկվող դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը նշված լիազորությունն իրացնելիս իրավասու է պատճառաբանել ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը, որը, սակայն, թերի կամ սխալ է պատճառաբանված<sup>8</sup>: Այս լիազորության օրենսդրական ձևակերպումը խնդրահարույց է նախ այն առումով, որ վճռաբեկ բողո-

---

<sup>8</sup>Վճռաբեկ ատյանի կողմից ստորադաս դատարանի թերի պատճառաբանված, սակայն գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը դատական ակտի իրավական պատճառաբանությունը զարգացնելու լիազորություն նախատեսված է նաև Ֆրանսիայում, Իտալիայում: Sté 'u *Jolowicz J. A.*, նշված աշխատություն, էջ 2054:

քարկման առարկա են կազմում Վերաքննիչ դատարանի դեռևս օրինական ուժի մեջ չմտած գործն ըստ էության լուծող դատական ակտերը, հետևաբար մերժելով բողոքը՝ Վճռաբեկ դատարանը չի կարող այն օրինական ուժի մեջ թողնել: Եվ երկրորդ՝ եթե թերի կամ մասնակի պատճառաբանված դատական ակտը կարող է գործն ըստ էության ճիշտ լուծող լինել, ապա նույնը դժվար է ասել սխալ պատճառաբանված դատական ակտի համար<sup>9</sup>: Միայն պատճառաբանված դատական ակտը վկայում է դատական ակտին քրեադատավարական օրենքով ներկայացվող բովանդակային պահանջների խախտման, այսինքն՝ դատական սխալի առկայության մասին, որը կարող է հիմք ծառայել, դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու կամ դատական ակտը փոփոխելու անհրաժեշտության մասին: Ընդ որում, անգամ այն դեպքերում, երբ Վճռաբեկ դատարանը պատճառաբանում է ստորադաս դատարանի թերի պատճառաբանված դատական ակտը, խոսքը վերաբերում է իրավական պատճառաբանությանը կամ այլ կերպ՝ ստորադաս դատարանի դատական ակտում արտահայտված իրավական դիրքորոշումը զարգացնելուն, իրավական փաստարկները լրացնելուն: Այս խնդիրները լուծվել են քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում: Մասնավորապես, սահմանվել է, որ մերժելով բողոքը Վճռաբեկ դատարանը բողոքարկվող դատական ակտը թողնում է անփոփոխ, այլ ոչ թե օրինական ուժի մեջ, և որ վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության ճիշտ լուծող, սակայն թերի կամ մասնակի սխալ (այլ ոչ թե սխալ) պատճառաբանված դատական ակտը (Նախագծի 393-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով (նաև Նախագծով) նախատեսված՝ Վճռաբեկ դատարանի հաջորդ լիազորությունը դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու և նոր քննության ծավալ սահմանելու լիազորությունն է, որի հետ

---

<sup>9</sup> Տե՛ս *Դիլբանդյան Ս. Ա., Մելիքյան Ռ. Ն.*, Վճռաբեկությունը քրեական դատավարությունում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու: Եր., ՀՀ իրավաբանների միություն, 2014, էջ 435:

կապված՝ առանձնահատուկ քննարկման կարիք ունի տեսական գրականության մեջ առաջ քաշվող այն հարցը, թե արդյոք ստորադաս դատարանում գործի նոր քննության սահմանները պետք է կանխորոշվեն վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմամբ և դրանով սահմանված նոր քննության ծավալով<sup>10</sup>: Մենք հակված ենք այս հարցին դրական պատասխան տալուն, քանի որ դա բխում է արդարադատության արդյունավետության ապահովման, մասնավորապես՝ դատական ակտերի բողոքարկման անընդհատ շրջապտույտից խուսափելու անհրաժեշտությունից: Բացի այդ, նման կարգավորումն անհրաժեշտ է վճռաբեկ դատարանի կողմից արդարադատության իրականացման և օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու խնդիրների արդյունավետ իրականացման համար: Հատկապես վերջին դեպքում միասնական դատական պրակտիկայի ձևավորումը հնարավոր է միայն ստորադաս դատարանի համար պարտադիր և ուղղորդող նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումների մշակմամբ<sup>11</sup>:

Այն, որ ստորադաս դատարանը չպետք է դուրս գա Վճռաբեկ դատարանի կողմից սահմանված՝ գործի նոր քննության ծավալներից

---

<sup>10</sup>Մինչև 1837 թվականը գործող մաքուր վճռաբեկության ֆրանսիական մոդելի համաձայն՝ ստորադաս դատարանը, որին ուղարկվել է գործը նոր քննության համար, կաշկանդված չէր նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմամբ: Սակայն այս կարգավորումը հետագայում որոշակիորեն փոփոխվել է և սահմանվել, որ գործի նոր քննության արդյունքում կայացված դատական ակտը կրկին բեկանելու դեպքում գործի նոր քննության ընթացքում վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը դառնում է պարտադիր ստորադաս դատարանի համար: Վերջին մտեցումը որդեգրել է նաև Բելգիան: *St u Jolowicz J. A., նշված աշխատությունը*, էջ 2052, *Sofie M.F. Geeroms*, Comparative law and legal translation. Why the terms Cassation, Revision and Appeal should not be translated. The American journal of Comparative Law, Vol. 50, No. 1, (Winter, 2002), էջ 205, 206, 209:

<sup>11</sup> Այս եզրահանգման օգտին է խոսում նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված օրենսդրական այն պահանջը, որ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) ընդհանրապես պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով ցանկացած այլ գործի քննության ժամանակ (բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ):



(օրինակ՝ եթե դատական ակտը բեկանվել և նոր քննության է ուղարկվել միայն պատժի կամ դատապարտյալների միայն մեկի մասով, ապա Վերաքննիչ դատարանն իրավասու չէ անդրադառնալու անձի մեղավորության կամ անմեղության հարցերին կամ գործը քննել նաև մյուս դատապարտյալների մասով) և որ միննույն ժամանակ պարտավոր է կատարել գործի նոր քննության ծավալով սահմանված անհրաժեշտ դատավարական գործողությունները<sup>12</sup>, իր հեթին ենթադրում է, որ Վճռաբեկ դատարանն իր դատական ակտում պետք է հստակ նշի նյութական և դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որը պետք է վերացվի ստորադաս դատարանի կողմից, ստորադաս դատարանի կողմից պարագաբանման ենթակա հանգամանքները, նոր քննության ընթացքում կատարվելիք անհրաժեշտ դատավարական գործողությունների շրջանակը<sup>13</sup>: Ընդ որում կոնկրետ ստորադաս դատարանը, որին գործը պետք է ուղարկվի նոր քննության համար, Վճռաբեկ դատարանը պետք է որոշի՝ հաշվի առնելով իր իսկ կողմից սահմանված քննության ծավալը, քանի որ դատավարական համապատասխան գործողություններ կատարելու և թույլ տված խախտումները վերացնելու՝ առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի օրենսդրական հնարավորությունները միատեսակ չեն:

Վերոշարադրյալը, սակայն, չպետք է հիմք տա եզրակացնելու, որ Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ կանխորոշում է ստորադաս դատարանի եզրահանգումները և կայացվելիք որոշումը: Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը և դրանով սահմանված նոր քննության ծավալը պարտադիր են ստորադաս դատարանի համար, ուղղորդում են ստորադաս դատարանում գործի նոր քննությունը, սակայն չեն կանխորոշում դրա արդյունքը, ինչը կհակասեր դատարանների ներքին անկախության սկզբունքներին:

ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգիրքը, ինչպես արդեն նշել ենք, չի հստակեցնում Վճռաբեկ դատարանի լիազորություն-

---

<sup>12</sup>Նախագծում վերադաս դատարանի կողմից փոխանցված վարույթով այդ դատարանի սահմանած ծավալի շրջանակներում անհրաժեշտ վարության ին գործողությունները չկատարելը նախատեսվել է որպես դատական ակտի անվերապահ բեկանման հիմք:

<sup>13</sup> St' u *Гродзинский М. М.*, Кассационное и надзорное производство в советском уголовном процессе: էջ 71:

ների՝ ընդհանրապես և այս լիազորության իրականացման հիմքերը՝ մասնավորապես: Պարզապես կարելի է ենթադրել, որ Վճռաբեկ դատարանն իր այս լիազորությունը պետք է իրականացնի բոլոր այն դեպքերում, երբ ստորադաս դատարանի կողմից թույլ տված խախտումներն իրենց բնույթով այնպիսին են, որ Վճռաբեկ դատարանում գործի քննության կարգը և վերջինիս վերապահված օրենսդրական հնարավորությունները չեն կարող թույլ տալ ուղղել դրանք:

Քննարկվող լիազորության հետ կապված՝ Նախագիծն ավելի հստակ կարգավորում է պարունակում՝ սահմանելով օրենսդրական պահանջ այն մասին, որ քրեադատավարական օրենքի էական խախտման՝ նույն նախագծի 381-րդ հոդվածի 1-ին մասի 2-11-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Վճռաբեկ դատարանը պարտադիր բեկանում է ստորադաս դատարանի դատական ակտը՝ վարույթը փոխանցելով համապատասխան ստորադաս դատարան նոր քննության: Ընդ որում, նշված հիմքերը գրեթե նույնական են դատական ակտի անվերապահ բեկանման՝ ՔՂՕ 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-11-րդ կետերով նախատեսված հիմքերին: Համապատասխան հիմքերի առկայության դեպքում թե գործող քրեական դատավարության օրենսգրքով և թե Նախագծով Վերաքննիչ դատարանը կարող է ոչ միայն բեկանել դատական ակտը և գործը (վարույթը) փոխանցել նոր քննության, այլև կայացնել նոր դատական ակտ: Նույն հիմքերի առկայության պարագայում ՀՀ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների լիազորությունների օրենսդրական կարգավորման տարբերակումն անհրաժեշտ է՝ պայմանավորված դատական ակտերի վերաքննիչ վերանայման կառուցակարգի առանձնահատկություններով: Խոսքը վերաբերում է Վերաքննիչ դատարանում կողմերի պարտադիր մասնակցության օրենսդրական պահանջին, ապացույցներ, այդ թվում՝ լրացուցիչ ներկայացված, հետազոտելու և ըստ այդմ գործի փաստական կողմը վերանայելու հնարավորությանը: Այսինքն, Վերաքննիչ դատարանին վերապահված օրենսդրական հնարավորությունները կարող են բավարար լինել թույլ տված դատական սխալը ուղղելու և նոր դատական ակտ կայացնելու համար: Նույն հիմքերի առկայության դեպքում Վճռաբեկ դատարանին ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու և նոր դատական ակտ կայացնելու հնարավորություն չընձեռելը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված խախտումներն իրենց բնույթով այնպի-

սին են, որ Վճռաբեկ դատարանում գործի քննության կարգը և վերջինիս վերապահված օրենսդրական հնարավորությունները չեն կարող թույլ տալ ուղղել դրանք: Բոլոր այդ խախտումները (օրինակ՝ դատավճիռը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, դատական վարույթն անիրավաչափորեն իրականացվել է մեղադրյալի բացակայությամբ, դատական վարույթն իրականացվել է պաշտպանի բացակայությամբ, երբ նրա մասնակցությունը, համաձայն օրենքի, պարտադիր էր և այլն) հնարավոր է ուղղել միայն նոր քննության, որոշակի դատավարական ընթացակարգ կրկնելու արդյունքում, ինչը Վճռաբեկ դատարանում ապահովել հնարավոր չէ: Հետևաբար, իրավաչափ է Նախագծում տրված այն կարգավորումը, որ համապատասխան հիմքերի առկայության պարագայում Վճռաբեկ դատարանը պարտադիր բեկանում է ստորադաս դատարանի դատական ակտը՝ վարույթը փոխանցելով համապատասխան ստորադաս դատարան նոր քննության:

Առանձնահատուկ քննարկման կարիք ունի այն հարցը, թե վճռաբեկ դատարանը ինչ որոշում պետք է կայացնի «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ին ընդունված թիվ ՀՕ-48-Ն օրենքով որպես դատական ակտի անվերապահ բեկանման հիմք նախատեսված այն իրավիճակի առկայության դեպքում, երբ մեղադրական դատավճիռը կայացվել է ապացույցների բավարար ամբողջությամբ չհիմնավորված խոստովանական ցուցմունքի հիման վրա: Այս հիմքը, ըստ էության, իր բնույթով քրեական հետապնդումը բացառող հանգամանք է: Այն քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանքները սահմանող՝ քրեական դատավարության գործող օրենսգրքի 35-րդ հոդված 2-րդ մասում նախատեսված՝ հանցագործությանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքի մասնակի դրսևորում է, որն առանձնահատուկ ընդգծվել է օրենսդրի կողմից՝ միգուցե նպատակ ունենալով կանխելու անձի դատապարտումը (հանցագործությանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված համարելը) սոսկ խոստովանական ցուցմունքների վրա՝ հաշվի առնելով պրակտիկայում ապացույցի այդ տեսակին տրվող առանձնահատուկ կարևորությունը: Սակայն միևնույն ժամանակ նշված հիմքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում ուղղակիորեն նախատեսված չէ, ուստի

այս հիմքով քրեական գործով վարույթը կարճվել և քրեական հետապնդումը դադարեցվել չի կարող: Իսկ եթե քրեական հետապնդումը դադարեցվի ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, ապա կստացվի, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով սահմանված հիմքի առկայության պարագայում դատարանը որոշում է կայացնում նույն մասի 1-ին կետով սահմանված հիմքով: Կամ եթե դատական ակտը բեկանվի և գործն ուղարկվի վերաքննիչ կամ առաջին ատյանի դատարան նոր քննության, ապա այս դեպքում ևս քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կամ արդարացման դատավճիռ կայացնելու օրենսդրական հնարավորությունը դարձյալ բացակայում է, քանի որ այս հիմքը, ինչպես արդեն նշվել է, ամրագրված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում, իսկ արդարացման դատավճիռ կայացնելու օրենսդրական հնարավորությունը նախատեսող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այդ հնարավորությունը սահմանափակված է նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքով: Ուստի, որպես խնդրի հնարավոր լուծում՝ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը «չլինելու» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակության նոր նախադասությամբ՝ «կամ հանցագործությանը մեղադրյալի մասնակցությունը միայն վերջինիս՝ ապացույցների բավարար ամբողջությամբ չհաստատված խոստովանական ցուցմունքներով հիմնավորելու»:

Դատական ակտի անվերապահ բեկանման այս հիմքը նախատեսված է նաև Նախագծում՝ համաձայն որի նշված հիմքի առկայության դեպքում վճռաբեկ դատարանը բեկանում է ստորադաս դատարանի դատական ակտը՝ վարույթը փոխանցելով համապատասխան ստորադաս դատարան նոր քննության (Նախագծի 394-րդ հոդվածի 6-րդ մաս): Նման օրենսդրական կարգավորումը, կարծում ենք, պայմանավորված է նրանով, որ Նախագծում ևս այս հիմքը քրեական հետապնդումը բացառող հանգամանքների շարքում նախատեսված չէ (ընդ որում, Նախագծով քրեական հետապնդումը բացառող հանգամանք նախատեսված չէ նաև հանցագործությանն անձի մասնակցությունն ապացուցված չլինելը, փոխարենը նշվում է մեղադրյալի

կողմից իրեն մեղսագրվող արարքը չկատարելն ապացուցված լինելը), սակայն միևնույն ժամանակ Նախագծով թե առաջին ատյանի և թե վերաքննիչ դատարանը լիազորված են կայացնելու արդարացման դատավճիռ (արդարացման վերդիկտ), երբ, ի թիվս այլոց, բացասական պատասխան է տրվում այն հարցին, թե ապացուցված է արդյոք մեղադրյալի կողմից այդ արարքը կատարելը (Նախագծի 348-րդ հոդված): Չանտեսելով այն հանգամանքը, որ Նախագծում քննարկվող խնդրի կարգավորումը բխում է քրեական հետապնդումը դադարեցնելու և արդարացման դատավճիռ կայացնելու հիմքերի և կարգի համակարգային օրենսդրական կանոնակարգման տրամաբանությունից, այդուհանդերձ, պետք է նշել, որ Վճռաբեկ դատարանի լիազորությունների մասով այն այնքան էլ ընդունելի չէ դատավարական խնայողության տեսանկյունից, քանի որ քննարկվող հիմքն իր բնույթով այնպիսին է, որ եթե չկա գործի փաստական կողմը վերանայելու և ապացույցներ հետազոտելու, գործի նոր քննության անհրաժեշտություն, հետևաբար նաև կարիք չկա գործն ուղարկելու նոր քննության, քանի որ Վճռաբեկ դատարանը լիարժեք հնարավորություն ունի կայացնելու քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում այն պարագայում, երբ թե քրեական դատավարության գործող օրենսգիրքը և թե Նախագիծը Վճռաբեկ դատարանին նման որոշում կայացնելու լիազորություն են ընձեռում:

Վճռաբեկ դատարանի՝ քննարկման կարիք ունեցող հաջորդ լիազորությունը բողոքարկվող դատական ակտը փոփոխելու լիազորությունն է: Վճռաբեկ դատարանի այս (նաև քրեական գործով վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու) լիազորության առկայության պարագայում տեսական գրականության մեջ առաջ է քաշվում վճռաբեկ ատյանում ապացուցման գործընթացի առկայության և դրա առանձնահատկությունների հարցը: Ինչպես արդեն նշվել է, դատական ակտերի վճռաբեկ վերանայման մեխանիզմը ենթադրում է միայն գործի իրավական կողմը վերանայելու հնարավորություն: Վճռաբեկ դատարանը դատական ակտը (գործը) վերանայում է ոչ թե ըստ էության, այլ ստորադաս դատարանի կողմից դատական ակտ կայացնելիս (գործը քննելիս) քրեադատավարական օրենքով սահմանված ընթացակարգը պահպանելու և հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ օրենքը ճիշտ կիրա-

ռելու տեսանկյունից: Վճռաբեկ աստյանը պետք է կաշկանդված լինի ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքներով և միայն ստուգի, թե արդյոք ճիշտ է ստորադաս դատարանը կիրառել իրավական նորմը: Հաշվի առնելով դատական ակտերի վճռաբեկ վերանայման մեխանիզմի այս հիմնական առանձնահատկությունը՝ որոշ դատավարագետներ ընդհանրապես ժխտում են վճռաբեկ դատարանում ապացուցման գործընթացի առկայությունը և կարծիք հայտնում այն մասին, որ վճռաբեկ դատարանը չի կարող նորից գնահատել այն ապացույցները, որոնք արդեն իսկ պատշաճ ձևով հետազոտվել և գնահատվել են գործի ըստ էության քննություն իրականացրած ստորադաս դատարանների կողմից: Սակայն, կարծում ենք, առավել հիմնավոր է հակառակ տեսակետն արտահայտող դատավարագետների դիրքորոշումն այն մասին, որ վճռաբեկ դատարանի գործունեության մեջ առկա է նվազագույնն ապացուցման գործընթացի տարրերից մեկը՝ ապացույցների գնահատումը, քանի որ դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն կապված է ապացույցների գնահատման հետ: Ստորադաս դատարանի եզրահանգումները, որոնք արտացոլված են բողոքարկվող դատական ակտում, ապացուցման և, մասնավորապես, ապացույցների գնահատման արդյունք են: Հետևաբար, դատական ակտը վերանայող մարմինն իր առջև դրված խնդիրներն արդյունավետ լուծելու նպատակով պետք է ստուգի նաև դատական ակտը կայացրած դատարանի կողմից ապացույցների գնահատումը<sup>14</sup>: Վճռաբեկ դատարանն իրավասու է ստուգել, թե արդյոք ճիշտ է գնահատել ապացույցը դրանով հաստատված փաստական հանգամանքների՝ գործի համար ունեցած նշանակության (ապացույցի վերաբերելիություն) ապացույցի ձեռքբերման օրենքով սահմանված կարգի պահպանման (ապացույցի թույլատրելիություն), ապացույցի արժանահավատության և գործով ապացուցման առարկան կազմող հանգամանքները ապացուցված համարելու համար բավարար լինելու (ապացույցների բավարարություն) տեսանկյունից<sup>15</sup>:

Անգամ այն դատավարագետները, ովքեր ընդունում են վճռաբեկ դատարանի կողմից ապացույցների գնահատման գործառույթի իրա-

---

<sup>14</sup> Տե՛ս *Калмыков В. Б.*, նշված աշխ., էջ 25-26:

<sup>15</sup> Տե՛ս *Лавтух Н. В.*, նշված աշխ., էջ 45-46:

կանացումը, այդուհանդերձ միակարծիք չեն այդ գործառույթի էությունը, դրա իրականացման առանձնահատկությունների և շրջանակի մեկնաբանման հարցում: Այսպես, որոշ հեղինակներ գտնում են, որ վճռաբեկ դատարանն իրավասու է գնահատական տալ գործում առկա ապացույցներին, մյուսները պնդում են, որ վճռաբեկ դատարանը միայն ստուգում կամ քննադատում է ստորադաս դատարանի կողմից ապացույցներին տրված գնահատականը: Կա նաև այն տեսակետը, որ դատարանն իրականացնում է ապացույցների վերագնահատում<sup>16</sup>: Կարծում ենք՝ այն մոտեցումը, որ վճռաբեկ դատարանը ոչ թե գնահատում, այլ սոսկ ստուգում է ստորադաս դատարանի կողմից ապացույցներին տրված գնահատականը, ինքնանպատակ է, քանի որ դժվար է պատկերացնել, որ ապացույցին տրված գնահատականը կարելի է ստուգել այլ կերպ, քան այդ ապացույցները վերադաս դատական աստիճանի կողմից նորից գնահատելու և այդ գնահատականը ստորադաս դատարանի կողմից տրված գնահատականի հետ համադրելու ճանապարհով: Այլ հարց է, որ վճռաբեկ դատարանին ապացույցների գնահատման գործառույթի վերապահումը չի նշանակում, որ վերջինս կարող է վերանայել գործի փաստական կողմը, հաստատված համարել նոր փաստական հանգամանքներ: Բացի այդ, վճռաբեկ դատարանում ապացույցման գործընթացը սահմանափակ է նաև այն առումով, որ այստեղ ապացույցների անմիջական հետազոտություն չի իրականացվում, և առավել ևս դատարանի նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ նոր ապացույցներ չեն ներկայացվում: Իհարկե, տեսական գրականության մեջ կան տարբեր առաջարկներ վճռաբեկ դատարանի գործունեության մեջ վերաքննության տարրերն ընդլայնելու, մասնավորապես, առանձին դեպքերում ապացույցների անմիջական հետազոտություն իրականացնելու, այն է՝ վկաներին հարցաքննելու, փորձաքննություն նշանակելու լիազորություն ընձեռելու, վճռաբեկ դատարան լրացուցիչ նյութեր ներկայացնելու հնարավորություն նախատեսելու մասին<sup>17</sup>: Սակայն մենք առավել հակված ենք այն դիրքորոշմանը, որ ապացույցներն անմիջա-

---

<sup>16</sup>St 'u *Кудова Э. Ф.*, Советская кассация как гарантия законности в правосудии. М., 1957, էջ 114, *Мухин И. И.*, Кассационное обжалование, опротестование и пересмотр приговоров. М., 1956, էջ 51:

<sup>17</sup>St 'u *Сухова О. А.*, նշված աշխատությունը, էջ 24, *Калмыков В.Б.*, նշված աշխ., էջ 26-28, *Лантух Н. В.*, նշված աշխ., էջ 47:

կանոթեն հետազոտելու և դրա հիման վրա որոշակի փաստական հանգամանքներ ապացուցված համարելու լիազորությունը առաջին ատյանի դատարանի (նաև վերաքննիչ դատարանի) մենաշնորհն է և դուրս է վճռաբեկ վերանայման կառուցակարգի շրջանակներից: Եվս մեկ անգամ վերահաստատելով այն դիրքորոշումը, որ գործնակա- նում դժվար է ապահովել մաքուր վճռաբեկության դասական մոդելը, այդուհանդերձ, վճռաբեկ դատարանին ապացույցներ հետազոտելու և գործի փաստական կողմն ուղղակիորեն վերանայելու լիազորու- թյուն վերապահելու դեպքում դատական ակտերի վճռաբեկ վերանայ- ման մեխանիզմը կորցնում է զուտ գործի իրավական կողմը վերանա- յելու իր տարբերիչ առանձնահատկությունը, ինչը և հանգեցնում է դատական ակտերի վերանայման երկու հիմնական ձևերի անհարկի մերձեցմանը և ընդհուպ մինչև նույնացմանը<sup>18</sup>: Պարզապես Վճռաբեկ դատարանի՝ դատական ակտը փոփոխելու լիազորության առկա- յությունը վկայում է, որ վերջինս իրավասու է ապացույցների գնա- հատման արդյունքում նոր իրավական գնահատական տալ գործում առկա փաստական հանգամանքներին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարա- նի դատական ակտի փոփոխությունը<sup>19</sup> չի ենթադրում գործի ըստ էության քննություն իրականացնելու և ապացույցներն անմիջականո- րեն հետազոտելու հնարավորություն: Եվ թե՛ քրեական դատավա- րության գործող օրենսգիրքը, թե՛ Նախագիծը, սահմանելով Վճռաբեկ դատարանի այս լիազորությունը, դրա իրականացման համար իրա- վաչափորեն պարտադիր պահանջ են համարում հետևյալ երկու պայմանների առկայությունը.

1) համապատասխան ստորադաս դատարանի կողմից հաս- տատված փաստական հանգամանքները հնարավորություն են տա- լիս կայացնելու նման ակտ, (այս պայմանը հստակ վկայում է այն մա- սին, որ Վճռաբեկ դատարանը կաշկանդված է ստորադաս դատարա-

---

<sup>18</sup> Ավելի մանրամասն տե՛ս *Кущова Э. Ф.*, նշված աշխ., էջ 175, *Левин А.*, Пределы полномочий кассационной инстанции по уголовному делу // Советское государство и право. 1948. № 8, էջ 37:

<sup>19</sup> Եթե քրեական դատավարության գործող օրենսգրքում նշվում է դատական ակտը բեկանելու և փոփոխելու, ապա Նախագծում՝ միայն փոփոխելու մասին, ինչը միանգամայն իրավաչափ է, քանի որ բեկանված (ոչնչացված, չեղյալ հայտարարված) դատական ակտը փոփոխել հնարավոր չէ:



նի կողմից հաստատված փաստական հանգամանքներով և իրավունք չունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանքներ) և

2) դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Հետևաբար, եթե դատական ակտի փոփոխումը դուրս է Վճռաբեկ դատարանի իրավասության շրջանակներից, ապա այն պետք է բեկանվի և գործն ուղարկվի ստորադաս դատարան նոր քննության:

Տեսական գրականության մեջ այս լիազորության հետ կապված՝ լայնորեն քննարկվում են նաև վճռաբեկ դատարանի կողմից արարքի իրավական գնահատականը, ինչպես նաև նշանակված պատիժը փոխելու<sup>20</sup> հարցերը, ինչը վկայում է դրանց հատուկ անդրադառնալու անհրաժեշտության մասին:

Այսպես, որոշ դատավարագետներ հնարավոր են համարում վերադաս դատարանի կողմից արարքի իրավական գնահատականի փոփոխումը, սակայն միայն որոշակի պայմանների առկայության պարագայում, որոնք կոչված են երաշխավորելու մեղադրյալի պաշտպանության իրավունքը: Արարքի իրավական գնահատականը կարող է փոփոխվել, եթե

1) առաջին աստիճանի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները դա թույլ են տալիս, և դրանց արժանահավատությունը վերադաս դատական աստիճանի մոտ կասկած չի հարուցում.

2) արարքի նոր իրավական գնահատականը չի վատթարացնում դատապարտյալի վիճակը.

3) արարքի իրավական գնահատականը փոփոխվում է առաջադրված մեղադրանքի փաստական հանգամանքների շրջանակում.

4) արարքի իրավական գնահատականի փոփոխությունը չի նշանակում անձին իրեն առաջադրված մեղադրանքից բացի նաև մեկ այլ հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչել<sup>21</sup>:

ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքը չի կանոնակարգում Վճռաբեկ դատարանի կողմից արարքի իրավական գնահատականը փոխելու հարցը, իսկ Նախագծի 394-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարզելով, որ մեղադրյալի արարքի իրավական գնահա-

---

<sup>20</sup> Տե՛ս *Калмыков В. Б.*, նշված աշխ., էջ 196:

<sup>21</sup> Տե՛ս *Кудова Э. Ф.*, նշված աշխ., էջ 179-180:

տականը ճիշտ չէ՝ վճռաբեկ դատարանը բեկանում է ստորադաս դատարանի դատական ակտը՝ վարույթը փոխանցելով համապատասխան ստորադաս դատարան նոր քննության կամ օրինական ուժ տալով առաջին աստիճանի դատարանի դատական ակտին<sup>22</sup>:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված պաշտպանության իրավունքի լույսի ներքո վերադաս դատական աստիճանում արարքի իրավական գնահատականը փոխելու ինդիքին անդրադարձել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը՝ մասնավորապես Դալլոսն ընդդեմ Հունգարիայի գործով: Վերոհիշյալ գործով որոշման մեջ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթթակետով նախատեսված իրեն առաջադրված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու իրավունքը պետք է դիտարկել նույն կետի «բ» ենթակետով նախատեսված իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություն ունենալու իրավունքի հետ, իսկ մեղադրանք ասելով պետք է հասկանալ ոչ միայն դրա հիմքում ընկած հանգամանքները, այլև դրանց տրված իրավական գնահատականը: Կոնկրետ գործով Հունգարիայի շրջանային դատարանի (վերաքննիչ աստիճան) կողմից արարքի իրավական գնահատականի փոփոխությունը Եվրոպական դատարանը չի դիտարկել որպես պաշտպանության իրավունքի խախտում՝ կարևորելով այն հանգամանքը, որ նոր իրավական գնահատականը եղել է մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքների շրջանակում և որ հնարավորություն է եղել այն բողոքարկելու Հուն-

---

<sup>22</sup> ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքը կանոնակարգում է միայն վերաքննիչ դատարանի կողմից արարքի իրավական գնահատականը փոխելու լիազորությունը: Գործի քննության արդյունքում գտնելով, որ արարքն իրավաբանորեն ճիշտ որակված չէ, վերաքննիչ դատարանն իրավունք ունի փոխել հանցագործության որակումը քրեական օրենքի այն հոդվածով, որը պատասխանատվություն է նախատեսում ավելի թեթև հանցագործության համար: Չխորանալով ընդհանրապես դատարանի կողմից արարքի իրավական գնահատականը փոխելու ինստիտուտի օրենսդրական կանոնակարգման մեջ՝ պարզապես պետք է նշել, որ թե Նախագծով և թե քրեական դատավարության գործող կարգավորմամբ արարքի իրավական գնահատականը փոխելիս դատարանը կաշկանդված է մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքներով: Սակայն եթե գործող քրեական դատավարության օրենսգրքով դատարանն արարքի գնահատականը կարող է փոխել միայն մեղմացման, ապա Նախագծով դա հնարավոր է նաև խստացման առումով:

գարիայի գերագույն դատարան (երրորդ ատյան) (St' u Dallos v. Hungary, 2001 թվականի մարտի 1-ի վճիռ, գանգատ թիվ 29082/95, 47-53-րդ կետեր):

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարծում ենք իրավաչափ կարող է դիտարկվել արարքի իրավական գնահատականի փոփոխությունը Վերաքննիչ (հիարկե, հաստատված փաստական հանգամանքների շրջանակում), սակայն ոչ Վճռաբեկ դատարանի կողմից, քանի որ վերջին դեպքում անձը զրկվում է իր արարքին տրված իրավական գնահատականը բողոքարկելու (այդ մասով մեղադրանքից պաշտպանվելու) իրավունքից:

Անդրադառնալով պատժի մասով ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու հարցին՝ հարկ է նշել, որ ՀՀ գործող քրական դատավարության օրենսգիրքն այս խնդրի առնչությամբ դարձյալ որևէ հստակ օրենսդրական կարգավորում (հետևաբար նաև արգելք) չի նախատեսում: Մինչդեռ Նախագիծը սահմանում է, որ վճռաբեկ դատարանն իրավասու չէ պատժի մասով փոփոխել ստորադաս դատարանի ակտը (Նախագծի 393-րդ հոդվածի 2-րդ մաս), իսկ կոնկրետ այն դեպքում, երբ պարզվում է, որ մեղադրյալի նկատմամբ նշանակվել է նրան վերագրվող հանցագործության համար օրենքով չնախատեսված պատժատեսակ, պատժաչափ կամ նրա նկատմամբ նշանակված պատիժը սխալ է հաշվարկվել՝ վճռաբեկ դատարանը բեկանում է ստորադաս դատարանի դատական ակտը՝ վարույթը փոխանցելով համապատասխան ստորադաս դատարան նոր քննության կամ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին (Նախագծի 394-րդ հոդվածի 3-րդ մաս): Նախագծում տրված կարգավորումը, ըստ էության, ելնում է այն գաղափարից, որ պատիժ նշանակելը դուրս է բարձրագույն դատական ատյանի իրավասության շրջանակներից: Սակայն, այդուհանդերձ, կարծում ենք՝ այս մոտեցումը որոշակի խնդիրներ է առաջացնում դատավարական խնայողության տեսանկյունից: Տեսական գրականության մեջ ևս ընդհանուր առմամբ ընդունելի է բարձրագույն դատական ատյանի կողմից պատժի մասով դատական ատյանի փոփոխությունը՝ իհարկե դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիությունն ապահովելու պայմանով: Իսկ այդ երաշխիքը Նախագիծը բովանդակում է՝ սահմանելով, որ մեղադրյալի վիճակի վատթարացման առումով՝ մեղադրական դատավճիռը կարող է բեկանվել կամ փոփոխվել միայն այն

դեպքում, երբ այդ հիմքով և պահանջով բողոք է բերել դատախազը, տուժողը կամ նրա ներկայացուցիչը:

Ելնելով վերոգրյալից, կարծում ենք, որ իրավաչափ չէ Վճռաբեկ դատարանին պատժի մասով դատական ակտը փոխելու լիազորությունից զրկելը՝ հատկապես այն դեպքերում, երբ դա պայմանավորված է գործով թույլ տված դատական սխալը՝ քրեական օրենքի սխալ կիրառումն ուղղելու հետ: Բոլոր այն դեպքերում, երբ պատժի փոփոխությունը չի ենթադրի գործի փաստական կողմին անդրադառնալու անհրաժեշտություն, կարծում ենք՝ Վճռաբեկ դատարանը պետք է նման հնարավորություն ունենա:

Թե ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը և թե Նախագիծը, հաշվի առնելով դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության սկզբունքը<sup>23</sup>, առանձնահատուկ կանոնակարգել են Վճռաբեկ դատարանի կողմից արդարացման դատավճռի բեկանման լիազորությունը: Այսպես, ՔԴՕ 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարացման դատավճիռը կարող է վճռաբեկության կարգով բեկանվել ոչ այլ կերպ, քան դատախազի, տուժողի կամ նրա ներկայացուցչի բողոքի հիման վրա, կամ արդարացված անձի բողոքի հիման վրա, եթե նա համաձայն չէ արդարացման հիմքի հետ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արդարացման դատավճիռը, գործը կարճելու մասին կամ մեղադրյալի օգտին կայացրած այլ որոշումը չի կարող բեկանվել քրեադատավարական օրենքի էական խախտման շարժառիթով, եթե արդարացվածի անմեղությունը կասկած չի հարուցում: Հաշվի առնելով այն, որ գործող օրենսդրական կարգավորմամբ Վճռաբեկ դատարանը կաշկանդված է միայն վճռաբեկ բողոքի հիմքով և հիմնավորումներով, սակայն ոչ պահանջով, ստացվում է, որ դատախազի, տուժողի կամ նրա ներկայացուցչի բողոքի առկայությունը, անկախ պահանջից, կարող է յուրաքանչյուր դեպքում հանգեցնել արդարացման դատավճռի բեկանման: Այս խնդիրը Նախագծում լուծվել և սահմանվել է, որ վճռաբեկ դատարանն իրավասու է բեկանել արդարացման դատավճիռը, երբ այդ հիմքով և պահանջով բողոք է բերել դատախազը, տուժողը կամ նրա ներկայացուցիչը: Բացի այդ,

---

<sup>23</sup> Ավելի մանրամասն տե՛ս *Кудцова Э. Ф.*, նշված աշխ., էջ 161-163, *Моговиловкер Я. О.*, Некоторые вопросы теории советского уголовного процесса в свете нового уголовно-процессуального законодательства, էջ 212, *Петрухин И.Л.*, Запрет поворота к худшему в российском уголовном процессе // Государство и право. 2006. № 3, էջ 46, 53:

Նախագիծը, հաշվի առնելով այն, որ անձի վիճակը կարող է վատթարացվել ոչ միայն արդարացման դատավճռի բեկանման արդյունքում, սահմանել է, որ մեղադրական դատավճիռը ևս մեղադրյալի վիճակի վատթարացման առումով կարող է բեկանվել կամ փոփոխվել միայն այն դեպքում, երբ այդ հիմքով և պահանջով բողոք է բերել դատախազը, տուժողը կամ նրա ներկայացուցիչը՝ առավել համակողմանիորեն երաշխավորելով դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության սկզբունքը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ անհրաժեշտ ենք համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը, սահմանելով Վճռաբեկ դատարանի ընդհանուր լիազորությունները, այդուհանդերձ չի հստակեցրել դատական ակտի վճռաբեկ վերանայման արդյունքում դատական ակտի բեկանման և փոփոխման հիմքերը և առանձին հիմքերի առկայության դեպքում Վճռաբեկ դատարանի կոնկրետ լիազորությունները, որոնց հստակեցման գործնական կարևորության մասին է վկայում տեսական գրականության մեջ դրանց լայնորեն քննարկումը: Կարծում ենք, այս խնդիրը լուծելիս, այսինքն՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունների կանոնակարգման որոշակի մոդել ընտրելիս պետք է ելնել վերջինիս համապատասխան դատական սխալներն ուղղելու համաչափ օրենսդրական հնարավորություններ ընձեռելու անհրաժեշտությունից: Հնարավոր լուծում կարող է լինել միջանկյալ այնպիսի մոդելի ընտրությունը, որը համակցված ձևով կպարունակի վճռաբեկության թե մաքուր և թե խառը մոդելներին բնորոշ տարրեր, սակայն այնպիսի չափաբաժիններով, որ բացառվի վճռաբեկ ատյանին դատական սխալներն ուղղելու չափազանց լայն կամ չափազանց նեղ օրենսդրական հնարավորությունների ընձեռումը: Նախ, իբրև հիմք պետք է ծառայի այն գաղափարը, որ վճռաբեկության՝ որպես դատական ակտերի վերանայման ձևի յուրահատկությունը բացառապես գործի իրավական կողմի վերանայումն է: Վճռաբեկ վերանայման կառուցակարգի այս առանձնահատկությունը, սակայն, չի ենթադրում վճռաբեկ դատարանում դատական ակտի վերանայման չափազանց ձևականոնացված ընթացակարգի առկայություն, երբ վճռաբեկ դատարանը գրկված է հենց այդ նույն իրավական սխալներն արդյունավետորեն ուղղելու հնարավորությունից: Եվ այս համատեքստում, կարծում ենք, միանգամայն իրավաչափ է Վճռաբեկ դատարանին ոչ միայն վճռաբե-

կույթյան մաքուր մոդելին բնորոշ, այն է՝ կամ դատական ակտն անփոփոխ թողնելու կամ դատական ակտը բեկանելու, այլև վճռաբեկույթյան խառը մոդելին բնորոշ, մասնավորապես, դատական ակտը փոփոխելու, քրեական գործով վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու լիազորություններ ընձեռելը: Իսկ դա իր հերթին ենթադրում է նաև Վճռաբեկ դատարանին գործի էության մեջ որոշակիորեն խորանալու, ապացույցներ գնահատելու հնարավորության վերապահում, ինչը, կարծում ենք, արդարացված է և՛ Վճռաբեկ դատարանի կողմից իր խնդիրների արդյունավետ իրականացման, և՛ արդարադատության արդյունավետության շահի տեսանկյունից: Սակայն միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը չպետք է ունենա ապացույցներ հետազոտելու և դրա հիման վրա գործի փաստական կողմը վերանայելու լայն հնարավորություններ: Վերոհիշյալ եզրահանգման լույսի ներքո կարող ենք փաստել, որ քննարկվող խնդիրների առնչությամբ համաչափ օրենսդրական կարգավորում է նախատեսում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, որն առավելապես լրացրել է գործող օրենսդրական կարգավորման բացերը: Սակայն Նախագծում ևս առանձին հարցերի կանոնակարգումը, ինչպես արդեն նշել ենք, որոշակիորեն վիճելի է արդարադատության արդյունավետության ապահովման շահի տեսանկյունից:

**Татевик Суджян**

*Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ*

## **ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ВОПРОСЫ ЗАКОНОДАТЕЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ ПОЛНОМОЧИЙ КАССАЦИОННОГО СУДА**

Статья посвящена проблеме полномочий Кассационного суда по пересмотру судебных актов. Она раскрывает некоторые проблемные вопросы действующего правового регулирования на основе анализа правовой сущности кассации как формы пересмотра судебных актов. В статье так же рассматривается регулирование предложенное в проекте нового УПК РА.

**Tatevik Sujyan**

*PhD student of the YSU Chair of Criminal procedure and Criminalistics*

## **LEGISLATIVE REGULATION OF THE CASSATION COURT LIABILITIES: THEORETICAL AND PRACTICAL ISSUES**

The article is devoted to the issue of the scope of cassation court liabilities. It reveals the main shortcomings of the current regulations with consideration of the conclusions made in regard to the essential features of this form of judicial review. The article also refers to the certain solutions suggested in the Draft of the RA new CCP.

**Բանալի բառեր՝** *Լիազորություններ, մաքուր վճարելիություն, խառը վճարելիություն, փաստական հանգամանքներ, ապացույցների գնահատում, դատական ակտը բեկանել, նոր քննություն, իրավական գնահատական, պատիժը փոփոխել, դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիություն:*

**Ключевые слова:** *Полномочия, чистая кассация, смешанная кассация, фактические обстоятельства, оценка доказательств, отменить судебное решение, новое судебное разбирательство, правовая оценка, изменить наказание, запрет поворота к худшему.*

**Key words:** *Liabilities, pure cassation, impure cassation, factual circumstances, evaluation of evidence, to reverse the judicial act, new trial, legal assessment, modification of sentence, inadmissibility of the turn to deterioration.*